

ծել մանուկի կատարած աշխատանքը և ուսուցչի գործ դրած մեթոդը և որոշել՝ թէ ինչ ազդեցութիւն է ունենում այս կամ այն մեթոդը:

7) Վերջին խնդիրն է ուսուցչի գործունեութեան հետազօտութիւնը. հետազօտելով այս կամ այն մեթոդը՝ որոշում է թէ ինչպէս պէտք է վարուի ուսուցիչը որևէ առարկայ աւանդելու դէպքում:

Ի նկատի ունենալով փորձնական մանկավարժութեան ուսումնասիրութեան նիւթը պէտք է խոստովանել, որ ոչ բալոր մանկավարժական հարցերը հնարաւոր է փորձի միջոցով լուծել. օրինակ՝ ուսուցման կամ դաստիարակութեան ընդհանուր ու մասնաւոր նպատակները որոշում են պետութիւնը և հասարակութիւնը միասին՝ ի նկատի ունենալով ժամանակի կուլտուրայի զարգացման աստիճանը. յանախ ի հարկէ հաշուի են առնում նաև գործնական նպատակները. Այս պատճառով դաստիարակութեան և կրթութեան նպատակների մեծ մասը մանկավարժութեան մէջ չեն ուսումնասիրում: Մանկավարժութիւնը միայն կարող է որոշել, թէ այդ նպատակները համապատասխանում են արդեօք մանուկի բնաւորութեանը, այլ և մանկավարժութիւնը կարող է որոշել ինչ ճանապարհներով հասնել այդ նպատակներին:

(շարունակելի) Pessimist.

### ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՈՒԶԵՅ.

Արարատի այս տարուայ յունուարի համարում տըպաւած յօդուածիս մէջ յիշել էի, որ մեր հասարակութիւնը դէպի դպրոցական խնդիրը հարկաւոր հետաքրքրութիւն է ցոյց տալիս: Այս վերջերս կատարուած կտակները պարզուէն այդ են ապացուցած: Այդ կտակներից մէկը շատ ուշագրաւ է, որովհետեւ անմիջօրէն կապւում է դպրոցական խնդրի հետ և կոչուած է որոշ չտփով լրացնելու այն

պակասներից մի բանիուր, որոնք այնքան յամառօրէն բոյն են դրել մեր դպրոցներում—դա տիկին Քանանեանի ձեմարանին կից մանկավարժական մուղէյ հիմնելու համար նուիրաբերած գումարն է, ձեմարանի նպատակը գործական դարձնելու համար հաղիւ թէ մի այլ աւելի նպատառուր գործ երեւակայելի լինէր:

Ձեմարանի ամենագլխաւոր նպատակներից մէկն է ուսուցիչ տալ մեր հայ դպրոցներին, այս վերին աստիճանի կեռնքին համապատասխանող նպատակը դանադան ժամանակ զանազանակերպ է իրագործուել, լաւ կամ վատ և կամ՝ բոլորովին մռացութեան է յատնուած եղել: Զուտ մանկավարժական հաստատութեան բացակայութիւնը եղել է պատճառ, որ ճեմարանաւարտները չեն կարողացել գործնական մանկավարժութեան մէջ հիմնօրէն խորապես:

Եռական իմացութիւնը գեռ քիչ է կարգին ուսուցիչ լինելու համար, ամեն մի գործնական զրադան հիմունքը այդ է, Մէկը շատ լաւ իւնանում է ուշադրութեան յառաջանալու հոգեբանական պատճառները, գիտէ որոշ մեթոդների զուտ մանկավարժական լինելու հիմունքների բացատրութիւնը, գեղեցիկ լեզով կարող է ճառել ուսուցչի անհատականի նշանակութեան մասին կրթութեան ժամանակ և օրինակներ բերել, թէ որոշ դէպքերում ինչպէս պէտք է ուսուցիչը վարուի աշակերտների հետ, և ուրիշ շատ նման բաներ կարող է այդ մէկը իմանալ և քարոզել հասարակութեանը, սակայն այնուամենայնիւ լինել գործնականում մի շատ հասարակ, անվարժ և նոյն իսկ վատ ուսուցիչ ինչու. որովհետեւ պէտք է մանուելի ուշադրութիւնը, հոգեբանութիւնը, մանկավարժական մեթոդների ճշտութիւնը, ուսուցչի անհատականի նշանակութիւնը փորձել հենց այն անենեակում, ուր մանուելներն են նստած. Ամեն մի տեսական խմացութիւն պտղաբեր է դառնում այն գէպքում, երբ նա զործնականի բովից է անցել. Ճեմարանում տեսականորէն անցնելով մանկավարժութիւնը գեռ շի նշանակում, որ այդ-

տեղից դուրս են գալու փորձուած և պիտանի ուսուցիչներ, այլ որ նրանք միմիայն ծանօթ են մանկավարժական իմացութիւնների և հարկաւոր դէպքերում կարող են պիճարանել այդ խնդիրների մասին։ Պէտք է սակայն այդ բոլորովին միացնել նաև դործնականը. իսկ դործնականը կարգին կառող է լինել այն դէպքերում, երբ կայ բացի ձեմարանից նաև մի այլ փոքրիկ հաստատութիւն-փորձնական դրպրոց, կամ ինչպէս ձեմարանում ընդունուած է ասել-վարժոց։

Ձեմարանում ներկայում ևս մի այդպիսի փոքրիկ հաստատութիւն գոյութիւն ունի, սակայն բողժաթիւ պականերով և դա շատ էլ հասկանալի է. սենեակը անյարշմար առողջապահական տեսակէտից, յարմար իրեր վարժոցում դործը հիմնաւոր գնելու համար մեծ չափերով պակասում են, անկարելի է վարժոցի պատրաստականները շատացնել. հանգամանքներ, որոնք ներկայ պայմաններում անկարելի է վերացնել և վարժոցը լայն հիմքերի վրայ դնել։ Տիկին Քանանեանի ցանկացած և ի կեանք հրաւիրած հաստատութիւնը գալիս է հնարաւորութիւն. տալու ձեմարանի վարժոցը օրինակելի դարձնելու Այդ նոր հաստատութեան մէջ վարժոցի համար կը յատկացուին յարմար սենեակներ, դասաւանները կարելի է շատացնել, մեծ չափերով համապատասխան դպրոցական պիտոյքներ ու նենալ, վարժոցի այս ձեի բարեկարգուածը հնարաւորութիւն կը տայ ճեմարանաւարաններից պիտանի մասնագէտներ պատրաստելու։

Սրանով դեռ չեն լրանում այն սպասելիքները, որ ունենք մանկավարժական մուգէյից։ Ձեմարանում անցնում ենք տեսական և դործնական մանկավարժութիւնը դասախոսութիւնների միջոցաւ, կազները ոյց խօսակցութիւններից երեակայութեան մէջ պատկերներ են ստեղծում, թէ որ և է տեղ գոյութիւն ունին իրեր, մօդելներ, նկարներ, մեքենաներ, որոնց միջոցաւ դասը աշակերտներին աւելի դիտողական-հայեցողական է դարձում, որ բնական պատմութեան դաստանդմանը նպաստող բաղմա-

թիւ յարժարեցրած իրեւ կան, որ իրադինական դասաւանդման ժամանակ ևս պակաս չեն այդպիսի իրերը, որ կարդալը, թուաբանութիւնը հեշտացներու համար կան բազմաթիւ և այլ և այլ սիստեմների գործիքներ, ուակայն այդ բոլորի մասին միմիայն բառերով են գաղափար կազմուած և որովհետեւ այդ իմացութիւնները բառային են, ուստի և գործնականի վրայ ազդելու շատ քիչ ուժ են պարունակում իրենց մէջ։ Մանկավարժական մուղելը կոչուած է այդ սլակասի առաջն ևս առնելու, ուսանողը այդտեղ յարմարութիւն կունենայ անձամբ տեսնելու, փորձելու, ծանօթանալու այս իրերի հետ, որնց մասին ուսուցիչը խօսում է դասախոսութիւնների ընթացքում։ իսկ սա մանկավարժութեան գործնականի հետ ծանօթանալու ամենաէական-պայմաններից մէկն է։

Ճեմարանի գրադարանը համարւում է Կովկասի աչքի ընկնող գրադարաններից մէկը, բայց և այնպէս, ինչպէս ըոլոր մօտ ծանօթ եղողները վկայում են, այդ գրադարանը բաւականին աղքատ է մասնագիտական գրքերի կողմից։ Մասնագիտական մասը կազմուած է գլխաւորապէս այս կամ այն անհատների նուիրատութիւններից, իսկ պարզ է, որ մի գրադարան չի կարող սիստեմատիկորէն պարագել ցանկացողներին բաւարարել, որովհետեւ գրադարանի գրքերը կոյտ են կազմում անսիստեմ ժողովածուներին։ Այս հանգամանքներում ուսանողները չեն կարող նոյն իսկ տեսականօրէն, գրքերի միջոցաւ ծանօթանալ մանկավարժական խնդիրների հետ Երկու տարի առաջ ճեմարանի գրադարանի մանկավարժական կարեւոր գրքերի թիւը չէր անցնում տասից։ իսկ միթէ հնարաւոր է միմիայն դասախոսութիւնների միջոցաւ ուսանողներից պատրաստել այն, ինչ կազմում է ճեմարանի գլուխաւոր նպատակներից մէկը։ Պարզ է, որ ոչ Ահա այս կողմից ևս մուղելը օդնութեան է գալիս։ Այնտեղ, ինչպէս հիմնադիրն էլ է ցանկանում, պէտք է հաւաքռւին բազմաթիւ մանկավարժական գրքեր, մայրենի թէ օտար գրականութիւնից։ Առաջին նպատակն պէտք է լինի, ի հարկէ,

Հաւաքել այն բոլոր մանկավարժական գրուածքները, այլ և այլ հրատարակութիւնները, որոնք լոյս են տեսել հայեցէն լեզով։ Դրանով հիմք կը դրուի ապագայում՝ հայկական կրթութեան պատմութիւնը ուսումնասիրելու համար հարկաւոր նիւթերի ժողովածուին Բացի այդ գրադարանը կռւնենալ մանկավարժութեանը և մանկան հոգերանութեանը վերաբերող մասնագիտական բազմաթիւ գրքեր, ամսագրեր, պաշտօնական հրատարակութիւններ և այլն յատկապէս ռուսերէն և այլ օտար լեզուներով գրուած։ Այսպիսով լսարանցիներին կը տրուի հնարաւորութիւն ուսումնասիրելու մանկավարժական գրականութիւնը կատարեալ եղանակով։

Մանկավարժական մուզէյը մի աւելի մեծ նպատակի համար է կոչուած, նրանով սկսելու է ձեմարանը վերջապէս այն մեծ նպատակին մօտենալ, որի համար հիմնուել է։ Մեր մամուլի մէջ ձեմարանի մասին խօսելիս բազմաթիւ անգամ՝ կը գտնէք այն դարձուածքը, թէ ձեմարանը հայկական միակ բարձրագոյն դպրոցն է. այդպէս էլ մտածում ենք բոլորս. սակայն մեզ հաշիւ ենք տուել, թէ ինչ է նշանակում բարձրագոյն դպրոց։ Նրանով ձեմարանը կը բարձրանայ, երբ այնտեղ ըստ ձեսի կիրառուեն այն բոլոր ձեերը, որոնք գոյութիւն ունին բարձրագոյն դըպրոցներում, թէ նա բարձրագոյն կը դառնայ, երբ կիրառուի այն ոգին, որը կազմում է ամեն մի բարձրագոյն հաստատութեան հիմքը։ Այդ ոգին է-դիտութիւնը ծաղկեցնելու և ուսանողներին գիտական մեթոդներով աշխատելու ովորեցնելու և, ի հարկէ, միաժամանակ իմացութիւններ տալու ձգտումը։ Ձեմարանը մի վայր պէտք է լինի, ուր ծաղկելու են այս երկու նպատակները կողք-կողքի, իսկ այս ուղղութեամբ ձեմարանի անցեալում և ներկայում շատ չնշն բան է արուած։ Այժմ հարց է ծագում, մուզէյը ինչպէս կարող է նպաստել ձեմարանի գիտական գոյն ստանալու գործին։ Մեր մանկավարժական գրականութեան և նոյն իսկ օրագրութեան մէջ յաճախ խօսք է լինում արտասահմանում և Ռուսաստանում կամաց-կամաց

տարածւող հոգեբանական և մանկավարժական էքսպերի-  
մինտալ նոր ուղղութեան մասին \*): Հոգեբանական ուշ-  
սումնասիրութիւնները գեռ անցեալ դարու կէսերից դըր-  
ւում է էքսպերիմենտալ (փորձնական) հիմքերի վրայ և  
այդ ձեի փորձեր կատարելու համար հիմնում՝ են հոգե-  
բանական լաբարատօրիաներ: 19-րդ դարու վերջերից մի-  
միայն հիմք է դրւում էքսպերիմենտալ մանկավարժու-  
թեան և այդ նպատակով նոյնպէս լաբարատօրիաներ  
հիմնում: Այդ լաբարատօրիաներում զանազան գործիք-  
ների միջոցով կամ՝ առանց գործիքների դպրոցական երե-  
խաների վրայ փորձեր են կատարւում, օր. ինչպէս է դար-  
դանում երեխաների մարմնականը ըստ տարւայ եղանակ-  
ների, ինչ յատկանիշներ ունին երեխայի յիշողութիւնը՝  
ուշագրութիւնը, երեակայութիւնը և այլն և ինչ օրէնքների  
հիման վրայ են զարգանում: Ուսումնասիրում են նոյն  
եղանակով, թէ կարդալու ժամանակ երեխայի հոգեբանու-  
թիւնը ինչ դրութեան մէջ է լինում, ինչպէս է նպաստա-  
ւոր սկզնակներին դրելը կամ՝ կարդալը իւրացնել տալ.  
ուսումնասիրում է գծագրութեան, թուաբանութեան և  
այլ առարկաների մեթոդները և էքսպերիմենտների միջո-  
ցաւ եզրակացութիւններ հանում: Լաւագոյն մեթոդների  
մասին: Ահա այս կոչմանը պէտք է ծառայէ նաև ուղղէյը.  
պէտք է ուսումնասիրուեն հոգեբանական մանկավարժական  
խնդիրները փորձնական եղանակով: Ուսանողը ինքը պէտք է  
ուսումնասիրէ խնդիրները, ինքը պէտք է փորձեր կատարէ,  
ինքը սխալուէ, և ինքը ուղիղ հետևանքների հասնէ: Բացի  
այդ, դասաառուն էլ դրանով պէտք է հնարաւորութիւն  
ունենայ ինքը ինքնուրոյն խնդիրներ դնել և լուծման հա-  
մար աշխատել, որով կարող է նաև գիտութիւնը գոնէ փոքր  
չափերով յառաջադիմած լինել հայկական հողի վրայ:  
Այսպիսով կովկասում առաջին հոգեբանական լաբարա-  
տօրիայի հիմքն կը դրւուի:

\* ) Այս ինդքի մասին չեմ երկարում, որովհետեւ Աբա-  
րատի անցեալ և այս համարում կան Մէյմանի գրուածքների  
թարգմանութիւններ, որոնք վերաբերում են մեզ այժմ հե-  
տաքրքրող խնդրին:

Ճեմարանը օգտուում է նաև մի այլ կողմից։ Ճեմարանի սեմինարական մասի որոշ առարկաները, օր, աշխարհագրութիւն, ընական դիտութիւններ անհնար է լինում անցնել կանոնաւոր, դիտողական եղանակով։ Ճեմարանը չունի բուսաբանական, կենդանաբանական, աշխարհագրութեան վերաբերող իրերի, քարտէզների և նկարների ժողովածուներ։ Մուղէյի այդ ձեի ժողովածուներից մեծ չափերով կարող է օգտուել ճեմարանի դասարանական մասը դասաւութեան ժամանակ։ Ուրեմն և ճեմարանի թէ լսարանական և թէ դասարանական մասերը մեծ սպասելիքներ ունին հիմնուելիք մանկավարժական մուշկէյից։

Մուղէյը օգտակար չըպէտք է հանդիսանայ միմիայն ճեմարանի համար։ Նրանից սպասելիք օգուտները աւելի լոյն շրջանակներ ունին։

Մուղէյի իրերից պէտք է օգտուին այն դպրոցները, որոնք հարկաւոր յարմարութիւնը ունին։ Որոշ ժողովածուներ պէտք է ուզարկուին այլ և այլ դպրոցներ, որպէս զի գասաւանդման ժամանակ աշակերտներին այդ դիտողականացող իրերը ցոյց տրուին։ Մուղէյը բաց պէտք է լինի ամեն մի ուսուցչի առաջ, ով ցանկանում է իմանալ, թէ ինչ իրեր կան, ինչպէս կարելի է այդ իրերը գործ ածել, իրենց դպրոցների համար իրերից որոնք ամենից յարմար է գնել և այն նա այնտեղ կը լսի ցուցմունքներ, բացատրութիւններ, խորհուրդներ։ Կարող է օգտուել գրադարանից։ Նրան յարմարութիւն կը տրուի ուսումնասիրել մանկավարժական մի խնդիր, որն իրեն հետաքրքրում է։ Մուղէյը առիթ պէտք է դառնայ մանկավարժական կուրսերի կազմակերպման, նոր տարուայ կամ Զատկի տօներին և կամ ուսումնական տարին վերջանալու ժամանակները կը կազմակերպեն գասախօսութիւններ և փորձնական աշխատանքներ այն ուսուցիչների համար, որոնք մանկավարժական նորագոյն ուսումնասիրութիւնների մասին մի որոշ գաղափար կազմել կը ցանկային։

Ճեմարանի մանկավարժական կեանը այս նոր հաս-

տատութեան միջօցաւ մի նոր շրջանի մէջէ մտնում գրաւնով ծեմարանի ազգեցութիւնը մեր դպրոցական կեանքի վրայ աւելի է ընդլայնւում, նա իր հիմնական նպատակին աւելի է մօտենում և դիտական զբաղումները իր հոգացողութեան առարկան դարձնում:

Տիկին Քանանեանի այս նուիրաքերութիւնը ծեմարանին ըստ իր որակի անդնահատելի է, նա շատ ճիշտ է ըմբռնել, թէ ինչ եղանակով կարելի է մի խելացի և շօշափելի օգուտ տալ թէ մեր միակ բարձրագոյն դպրոց ծեմարանին և թէ հայ դպրոցական կեանքին առհասարակ։ Տիկնոջը ճանաչողները հաւատացած են, որ մուգէյի հաստատութիւնից յետոյ էլ նա իր ուշադրութիւնը չի հեռացնի այդ հիմնարկութիւնից և հնարաւոր միջոցները ձեռք կառնէ նրան բարգաւաճ դրութեան մէջ պահելու համար։

#### Գ. Էդիլեան.

### ԿԱՆՑԻ ԻՄԱՃԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

#### IV

### Տրանցենդենտալ էսեսիկա.

Տրանցենդենտալ էստետիկայում<sup>1)</sup> կանոք գուտմատեմատիկայի փաստը վերցնելով իբրև քննդատութեան-

1) Էստետիկա բառն այստեղ չի նշանակում գեղագիտութիւն. Կանոք վերցնում է այն՝ հին յունական տառացի իմաստով, որ նշանակում է գգայաբանութիւն (գիտութիւն զգայութեան մասին): Խել տրանցենդենտալ է անուանում իւր ուստիմնասիրութեան այդ մասը, որովհետեւ հետազոտում է՝ չունի՞ արդեօք զգայականութիւնը իր մէջ այնպիսի պայմաններունք նիմնաւորէին արիօրի սինտետիկ զիտութեանց հնարաւորութիւնը։